ներքոյ Կախէթիոյ և Տփխիսոյ՝ ասպատակեաց զգաւառսն, զոր Սօմխէթ և Դումանիս ասեն։ Իսկ այժմս սակս վերոյ ասացեալ պատճառին ի Ռձ[illegible] թուին օգոստոսի տասն, գրոհ տուեալ առ հասարակ միահաղոյն ազգս այս Լազկիք ամենայն գլխաւորօք իւրեանց որք էին այսոքիկ. նոյն վերոյ ասացեալ Սուրխայն, Շամխալ, Իամին, Հաճի Դովուրթն, և Ալի սուլթանն ամենայն զօրուրթեամբ իւրեանց եկին ի վերայ քաղաքին Շամախու, և յաւուրս ութ սաստիկ կռուեցան, և ոչ կարացին առնուլ, այլ և համբաւ եւս եհաս առ նոսա ի հետուստ՝ իբր թէ յոմանց յետագալից իրեանց ազմկեալ իցէ երկիր նոցա, վասնորոյ յանկարծակի ի գիշերի մի յետս դարձեալ դարձան ի տեղիս իւրեանց։ Եւ ապա քաղաքացիքն Շամախու սկսան ամրացուցանել զկողմանս քաղաքին ցանկովք խորագունիւք, և շրջապատս որմովք. Այլ և զօրք եւս հասին աստի և անտի (այսինքն Գանջայու և Ղարաբաղու և Մղանու), այլ հրամանաւ շահին եկն նոր խան քաղաքին, որոյ անունն էր Հուսէյին խան Ագուլեցի։ Եւ զայն ամն պահեցին զքաղաքն մինչեւ գալ միւս ամին ի նոյն ժամանակն ի նոյն ամիսն։ Դարձեալ եկին վերոյիշեալ լեռնականքն առաւել քան զառաջինն յոյժ ամբոխիւք, և պատերազմեցան ուժգնութեամբ զաւուրս երկոտասան, և ապա առին զքաղաքն Շամախի ի Ռձ[illegible] թուին հայոց, օգոստոս ամսոյ, ի սուրբ Աստուածածնի պահոցն՝ յաւուրս Գ շաբթի։ Եւ եղեւ այսպէս առնուլն՝ քանզի որպէս յառաջն ասացաք երկու կրօնս ունիլ մահմետականաց, այսինքն շիայք, և սիւնիք, և բնակիչք յայսմ քաղաքի ընդ կիսու էին. այլ և յոլովքն էին սիւնիք. վասնորոյ ի Սարուլթօրփաղ անուանեալ կողման բնակիչքն, ի գիշերի բացին զկողմն իւրեանց և ի ներքս առին ի զօրացն թշնամեաց. և ընդ լուսանալ առաւօտուն ինքեանք եւս խառնեցան ընդ նոսա և ետուն ի ձեռս զքաղաքն։ Եւ մտեալ ի ներքս լազկացն սուր ի գործ արկին ի վերայ ղըզըլպաշ մահմետականացն, և զինչ ասացից սակս աղետից և արեան հեղմանցն որ իբրեւ զգետ հոսէին ի մէջ շուկային և ութ հարիւր այր ի գլխաւորաց քաղաքին և ի մեծամեծացն փախուցեալ և մտեալ էին Իմամն իւրեանց, որ ի մէջ քաղաքին։ Եւ զնոսա անդ իբրեւ զանասուն զենուին, միանգամայն հատին և սպառեցին